

ԱՐՄԵՆԻԱ ՉԱՎԱԿՆԵՐԻ
ՄԱՐՏԻՆԻ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԵՐԸ



ՀԱՅՈ-ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՄԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՄՈ ՄԱԼԻԱԾԱՆ

23483
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ
ՆՎԵՐ ՍԱՖԱՐՅԱՆ


2369
A 8618



ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԵՐԱՆԱԿԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԿՐԵՊԱՆ

1944




ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պատ. Խմբագիր՝ պրոֆ. Հ. ՄԵԼԻՔՅԱՆ





Արձեշ գալառաքաղաքը փոփած է Ալաւդար կամ Ծաղկունք լեռան գեղածիծաղ հովտում, հարավարեմայան կողմից հարեան ունենալով վանա հովտուն ծռվակը:

Արձեշը եղել է հայոց Քաջբերունի գալաքառի կենտրոնը: Այստեղ, հայրենի երկրում, զարեր շարունակ հայ գյուղացիությունը մշակել է արգավանդ հողը, ստեղծելով մըրճ գառատ այգիներ: Արձեշի հովտում հասնում է խաղողը, նուռն ու գեղձը: Առատ է եղել ոսկեփայլ ցորենը, զինին, ալանին: Արձեշ գետն առատ է եղել ձկներով:

Ահա այս հինավուրց քաղաքումն է 1907 թվին ծնվել Նվեր Գևորգի Սաֆարյանը, հայ ժողովրդի խիզախ դավակներից մեկը:

Նվերը առաջապես պատահնի էր, որ 1915 թ. ապրիլին, մի խուլ ու խավար գիշեր, սուլթանա-թուրքական հորդաները վիլհելմյան Գևորգանիայի թելադրությամբ ավերեցին Արձեշը:

Նրանք քարուքանդ արին տներն ու այզիները: Իսկ հայ ընակչության մեծ մասին՝ երեխաներին, մայրերին ու ծերունիներին ժողովեցին եկեղեցում, ողջ ողջ այրեցին: Այդ ժամանակ կարելի էր լսել բոցերի միջից բարձրացող Գևորգ Սաֆարյանի՝ Նվերի հոր տանջալի ձայնը. «Մնացողներ, վրեժ, վրեժ լուծեցեք»:

Եվ փոքրիկ Նվերը, որ ահարեկված մտել էր իր մոր՝ Սիմեի գիրկը, լսեց հոր ձայնը:

Մարդիկ այրեցին, խարույկը հանդավ, մոխրակույտ դարձավ: Արձեշում տիրեց այրված մարդկանց ճարպի դարձուրելի հոտը:

Գերսանական իմակերիալիստներն այդպես էին մաքրում իրենց ճանապարհը դեպի Բաքու և Հնդկաստան:

Գաղթեցին ողջ մնացած արձեցիները:

Որբացած երեխաներին մեջքերին կապած մայրերը թողին հարազատ, ավեր ու արյունոտ քաղաքը, ոտարբորիկ ու քաղցած, լաց ու կոծով ճամբա ընկան դեպի Ռուսաստան: Սրանց հետ էր նաև Նվերի մայրը, որը հեծկլտանքով քայլում էր ու մեջքով

տանում իր երկու զավակներին՝ Նվերին և
Սաթիկին:

Երկար տառապանքներից ու տանջանք-
ներից հետո նրանք մի կերպ համում են
Վաղարշապատ:

Իր երեխաների գոյությունը պահպանե-
լու համար, Սիմեն շրջում էր տեղացիների
տները, նրանց համար հաց թխում:

Վշտոտ մայրը Նվերին միշտ հիշեցնում
էր, թե գաղան թշնամին մեզ թափառական
ու հացի կարոտ դարձրեց, ուրիշի փշրանքնե-
րի հույսին թողեց, հորդ ու եղբորդ արյունը
խմեց:

Սովահար 10 տարեկան Նվերը 1917 թվին
գնում է Օշական և երկու տարի բատրա-
կություն անում կուլակների մոտ։ 1919
թվին մահանում է Նվերի մայրը՝ Սիմեն։
Այդ ժամանակ էլ Վաղարշապատի լուսբա-
ժինը Նվերին ու Սաթիկին ոկզրում ընդու-
նում է Օշականի, ապա Աշտարակի ման-
կատունը, որտեղից տեղափոխում է Թա-
քիայի կոմունա-մանկատունը։

Թաքիայի կոմունայի գյուղատնտեսական աշխատանքներում Նվերն աչքի էր ընկնում իրեկ լավ աշխատող, իսկ դպրոցում՝ իրեկ ընդունակ, շնորհալի աշակերտ։ Երբ Աշտարակում 1921 թվին հիմնվեց պիոներական կազմակերպություն, Նվերն առաջիններից էր, որ կապեց կարմիր փողկապ։ Նա շուտով դարձավ ջոկվար։

Այն ժամանակ պիոներական կազմակերպություններում ընդունված էր պիոներական հավաքներին պատմել կարմիր հեքիաթներ բոլշևիկյան պարտիայի ականավոր գործիչների կյանքի ու դուրսունեության մասին։ Նա շատ էր սիրում Սերգո Օրջոնիկիձեի կյանքը, նա խիստ հուզվում էր, երբ լսում էր, թե ինչպես Օրջոնիկիձեին շղթայակապ, ոտքով հարյուրավոր կիլոմետրերով աքսոր են ուղարկել Հեռավոր Սիբիր։ Նրա գյուղագրգիռ սիրոն ավելի էր հուզվում, երբ լսում էր հոչակավոր կամոյի և Սերգեյ Լազոյի տանջանքների մասին։ Այս ամենը,

ակամայից, պատահուն հիշեցնում էր իր հոր
և մյուս հարազատների ողբերդական կո-
րուստը. Նա հիշում էր հոր վերջին խոսքե-
րը. «Վրեժ, վրեժ լուծեցեք»:

*
* *

Կարծեք հոր ձայնն էր, որ գեռ վաղ հա-
սակից Նվերին մղում էր դեպի զինվորական
ծառայություն։ Աշտարակի կոմերիտական
շրջկոմի ընդառաջելով նրան, 1923 թվին
գործուղեց Երևան՝ Մյասնիկյանի անվան
ուազմական գպրոցում սովորելու։

Բնորոշ են այդ գպրոցն ընդունվելու,
առթիվ Նվեր Սաֆարյանի խոսքերը՝ «Շատ
բան կարող էի սովորել, բայց որոշեցի առա-
ջին հերթին սովորել զենքի արվեստը, այ-
սինքն՝ հայրենիքն ու ժողովուրդը պաշտ-
պանելու ամենաարդար միջոցը, թշնամինե-
րին ուժով խրատելու միջոցը»։

Պարտիական Նվերի մեծ ընդունակու-
թյունն ու ուազմական գործի անսահման սերը
նրան մղում են առաջ։ 1927 թվին գերա-
զանց գնահատականներով ու թանկարժեք

պարզեներով նա ավարտեց հրամանատարական դպրոցը:

Դալրոցն ավարտելուց հետո նա նշանակվեց հայկական դիվիզիայի Յ-րդ գնդում գասակի հրամանատար, ապա, կարճ ժամանակ անց՝ նույն գնդի երկրորդ վաշտի հրամանատար: Տեսչական ստուգողական քննությունների ժամանակ մարտական ու քաղաքական բարձր ուսուցման ասոլարեզում նրա վաշտը գնդում տարիներ շարունակ շահում էր առաջին տեղը:

Նվերը լավ սպորտամեն էր, վաշտի հրամանատարության հետ մեկտեղ նա նշանակված էր Յ-րդ գնդի Փիզկուլտ կազմակերպիչ: Շնորհիվ նրա ջանքերի, դիվիզիայի ուղմ-Փիզկուլտ աշխատանքների բնագավառում գունդը միշտ շահում էր առաջնությունը:

Վաշտի մարտական ու քաղաքական ուսուցման գործի լավ դրվածքի և գնդի ռազմ-Փիզկուլտ աշխատանքները լավ կազմակերպելու համար, նա քանիցս պարզեա-

տրվել է գնդի և դիվիզիայի հրամանատաշության կողմից:

1936 թվի մայիսի 29-ին ՍՍՌ Միության Կինտգործկոմը Հայկական հրաձգային Վորոշիլովի տնվան դիվիզիայի 15-րդ տարեգարձի առթիվ մի շարք հրամանատարների պարզեատրեց շքանշաններով, այդ թվում նաև Նվեր Գևորգի Սաֆարյանին՝ «Պատվանշան» շքանշանով:

Միևնույն ժամանակ Սովետական Միության Մարշալ Կ. Ե. Վորոշիլովը ավագ լեյտենանտ Ն. Գ. Սաֆարյանին պարզեատրեց անվանական ոսկե խոշոր ժամացույցով:

Նվեր Սաֆարյանը չբավարարվելով իր գիտցածով՝ միշտ ձգտում էր առաջ գնայի խորացնել ուղղմական ուսումը: Եվ ահա 1937 թվին նրան հանդիպում հնք Մոսկվայի մերժունութիւն անվան ուղմական ակադեմիաւում սովորելիս: Նա գերազանց սովորողներից մեկն էր: Դեռ ուսման ընթացքում ակադեմիայի հրամանատարությունը երկու անգամ փոխում է Սաֆարյանի կոչումը,

տալով նրան կապիտանի, ապա մայորի
կոչում:

* * *

1940 թվին Ֆրունզեի անվան ուսումա-
կան ակադեմիան գերազանց գնահատական-
ներով ավարտելուց հետո, Արևմտյան Ուկ-
րաինայում նա աշխատում է գնդի շտաբի
պետի պաշտոնով:

Երբ 1941 թվի հունիսի 22-ին Փաշիս-
տական Կերմանիան ավազակային հարձա-
կում գործեց մեր սրբազն հայրենիքի
վրա, մայոր Ն. Գ. Սաֆարյանը սահմանա-
յին գնդի հրամանատար էր և հենց սկզբից
թշնամու առաջին ծանր հարվածն ընդու-
նողներից մեկը: Գունդը, որը կազմված էր
ուստի և ուկրաինական ժողովրդի զավակ-
ներից, մտավ գերմանա-Փաշիստական զավ-
թիչների գեմ մզվող արյունալի և ահեղ
մարտերի մեջ:

Սկսվեց մեծ քննության շրջանը, և Սա-
ֆարյանը սովետական հայրենիքի պաշտ-
պանության հենց առաջին մարտերում քա-

ջության ու հրամանատարի դերն իմաս-
նալու քննություն բռնեց:

Նվեր Սաֆարյանը մամավորապես
Դնեպրոպետրովսկի, Ստալինոյի և Վորոշի-
լովգրադի համար մղվող մարտերում փայ-
լուն գործեր կատարեց: Նա արդեն փոխ-
գնդապետ էր: Մարտերի վճռական վայր-
կյանին արհամարհելով մահը, նա, որպես
գնդի հրամանատար, նետվում էր ամենապա-
տասխանատու բնագծերը, հաղածում թշնա-
միներին, անվախության օրինակներ ցույց
տալով իր մարտիկներին ու սպաներին:

Վորոշիլովգրադի շրջանում հակառա-
կորդը նեղում էր մեր զորքերին: Հրամա-
նատարությունը պաշտպանության դժվա-
րին հատվածներից մեկը հանձնում է Սա-
ֆարյանի զորամասին՝ լրացուցիչ տրամա-
դրելով նրան զրահագնացք: Թշնամին ժամ
առ ժամ սեղմում է կրակի օղակը, սպառ-
նում է շրջապատման վտանգը: Այդ ահեղ
պահին, երբ խավարը թանձրանում էր երկ-
րի վրա, մի անձը ևային գիշեր Սաֆարյանն
անձամբ հետախուզության է գնում, ան-

ձայն, ծպտյալ, փշալարերի ու ականապատճառ
ված դօտերի արանքներով անցնում թշնամու
թիկունքը, ծանոթանում նրա ուժերին,
կրակակետերին, կռահում թշնամու մտա-
դրությունները և վերադառնում:

Չնայած Փիզիկական տկարությանը, Սա-
ֆարյանը հոգնածության ոչ մի նշան ցույց
չի տալիս: Առանց ժամանակ կորցնելու, նա
մշակում է հակագրոհի պլանը: Գործածու-
թյան մեջ է գնում զենքի բոլոր տեսակ-
ները և զրահագնացքը: Մի քանի ժամ տե-
վող կատաղի մարտերից հետոնա ետ է շպըր-
տում թշնամու գրոհը, ազատագրում 13
գյուղ, վերցնում հարուստ ուազմաավար և
մեծ թվով գերիներ:

Բարձր գնահատելով ուազմագաշտում
Սաֆարյանի կատարած սխրագործություն-
ները, ՍՍՌՄ Գերագույն Սովետը 1942 թվի
հունիսին նրան և նրա 658-րդ գունդը պար-
գևատրեց «Կարմիր դրոշի» շքանշանով:

Հայրենիքի համար մղվող մարտերում
ստալինյան վճռականությամբ կոփված
սղային տեղափոխում են դիվիզիա: Սկզ-

բուժնա լինում է գվարդիական դիվիզիայի
շտաբի պետ, ապա նույն դիվիզիայի հրամա-
նատարի տեղակալը Հետագայում, մարտերի
գաշտում, նա ընդունում է մեկ այլ դիվի-
զիայի հրամանատարությունը։ Այս պաշ-
տոնների համար Նվեր Սաֆարյանն ուներ
պատշաճ գիտելիքներ, վորձ, հմտություն և
մեծ հեղինակություն ու համակրանք էր վա-
յելում սպաների և մարտիկների միջ։ Նա միշտ
ձգտում էր, որպեսզի իրեն վստահած զորա-
մասը գերազանցորեն կատարի մեծ Ստալինի
և հայրենիքի պահանջը, և նա միշտ հաս-
նում էր իր նպատակին։ Նա հաջողությամբ
էր լուծում բարդ ռազմական խնդիրներ,
կենսագործում մեծ օպերացիաներ, տիրա-
պետելով թշնամուն օղակելու և ոչնչացնելու
արվեստին։

Հիտլերյան սպազակները սոզում էին զեզի
Սովետական Միության մարզարիտ Կով-
կասը։ Կուբանի ոսկեփայլ ցորենի տեսքը,
Գրոզնու և Բաքվի նավթի հոտը հարթեցրել
էին զելմանա-ֆաշիստական բանդիտներին։
Նրանք սպառնում էին Վրաստանին, Աղբքե-

Ճանին ու Հայաստանին։ Այդ ծանր օրերին
քաջարի Կարմիր Բանակի զորամասերը
կովկասյան լեռնաշղթայի ստորոտներում
ամուր պաշտպանության անառիկ գիծ էին
ստեղծել։ Այդ քաջարի զորամասերի թվումն
էր նաև նվեր Սաֆարյանի դիվիզիան։
Վերջապես Կարմիր Բանակը հարձակ-
ման անցավ Ստալինգրադի տակ և կովկաս-
սում։

Հարձակվեց նաև Սաֆարյանի դիվիզիան։
Ծրտաշունչ դեկտեմբերյան մի գիշեր
նրա դիվիզիան անցավ հարձակման, հաջո-
ղությամբ ճեղքեց թշնամու պաշտպանու-
թյան ամրացված բնագծերը և առաջ շարժ-
վեց, ազատագրելով տասնյակ գյուղեր,
վերցնելով ռազմաավար և հիտլերյան զին-
վորների ու սպաների արիական գլուխները
թաղեց կովկասյան հողում, Թերեքի ափե-
րին։

Հենց այս ահեղ մարտերի ժամանակ Սա-
ֆարյանին շնորհվում է գնդապետի կոչում։
Դիվիզիայի հրամանատար՝ գնդապետ
Սաֆարյանը դանվում էր կրակի առաջին

գծում: Թե՛ք մարտերից մեկի ժամանակ
կարգադրություն ստացավ՝

— Հանձնել N դիվիզիայի հրամանատառ-
րությունը և ընդունել 89-րդ Հայկական
հրաձգային դիվիզիան:

Ճանապարհից՝ 1943թ. փետրվարին, իր
կնոջը՝ Անիկին դրած նամակում ասում է.

«Անիկ ջան, իմ սիրած դիվիզիան, որը
կազմված էր ուսւ, ուկրաինական, բելոռուս
հերոս ժողովուրդների զավակներից՝ հանձ-
նեցի: Ծտապ գնում եմ ընդունելու 89-րդ
Հայկական դիվիզիան: Իմ կովող առյուծ
և մեծահոգի ընկերներից դժվարությամբ
բաժանվեցի: Ի՞նչպես չոիրեմ հայրենիքիս
աղատության ու անկախության համար
դիշեր ու ցերեկ մարտնչող, հաղթանակ կեր-
տող այդ դյուցազուններին:

Հանձնելով դիվիզիան, ինձ հետ տանում
եմ վառ և անմոռաց հեշողություններ»:

* * *

A 86/8

Գնդապետ Սաֆարյանն անհունորեն սի-
րում էր իր ոռու աղմիկներին և նրան-

ցից դժվարությամբ էր բաժանվում: Բայց
նա ապրում էր մի նոր զգացմունք, որի
մասին մինչ այդ չէր մտածել: Նա գնում էր
ընդունելու Հայկական դիվիզիա, և ինքն
իր մեջ թե հաղարտանում էր և թե զգում,
որ այդ նոր դիվիզիան իրենից մեծագույն
ջանքեր է պահանջում:

Փետրվարյան մի ցուրտ առավոտ նա
որոնում էր 89-րդ հրաձկային դիվիզիան:
Նա մեկ անգամ էլ նայեց քարտեզին, որու-
նեց այն տեղանքը, ուր պետք է լիներ
դիվիզիան: Իջնելով ավտոյից, ձեռքով ցույց
տվեց իր աղյուտանտին, որ այնտեղ,
բլրակի մոտ է հրամանատարական կետը:

Նա փոքրիկ ձորակի մեջ մտավ և ուղղվեց
դեպի հրամանատարական կետը: Հերթա-
պահն առաջ վաղեց, ընդունեց անծանոթ
զնդապետին, ստուգեց նրա ով լինելը և
ուղեկցեց նրան դեպի հրամանատարական
կետը:

Սաֆարյանը ներս մտավ ու մի հայաց-
քով զննեց չորս կողմը: Նա ճանաչեց սե-
ղանի վրա հենված սպաներին, գրեթե

բոլորին, իր հին մարտական ընկերներին, ու
ըսնցից բաժանվել էր վեց տարի առաջ, երբ
ինքը 1937 թվին գնաց Մոսկվա՝ Ֆրուն-
զեի անվան ակադեմիայում սովորելու:
Այստեղ էին մայորներ Դանիել Հակոբյանը,
Մովսես Խաչանյանը, Երվանդ Կարապե-
տյանը: Սրանք գնդերի հրամանատարներ
էին, եկել էին գիրիդիայի շտաբի պետի
մոտ խորհրդակցության:

Սաֆարյանն աննկատ քայլերով մոտե-
ցավ սեղանին և հրճվալից ասաց.

— Կոմդիվին թույլ ավել մասնակցելու
ձեր աշխատանքին:

Հակոբյանը գլուխը բարձրացրեց. Նրա
զարժմանքը շատ մեծ եղավ, երբ տեսավ
Սաֆարյանին: Նա ուրախությունից մի
տեսակ շփոթվեց, չգիտեր ինչ ասեր՝ «Նվեր
ջան», թե «ընկեր կոմդիվ»: Վերջապես
հրճվալից ու դողդոջուն ձայնով կանչեց.
— Կոմդիվ! Սաֆարյան:

Բոլորը վերկացան ու կանգնեցին զգասաւ

— Այն, այստեղ եմ, Դանիել ջան:

Այս խոսքերը դեռ չափարտած՝ հին

ընկերները խրճիթում փաթաթվեցին իրար՝
համբուրվեցին և երկար ժամանակ թոթա-
վում էին միմյանց ձեռքերը:

1943թ. փետրվարի 26-ին ստանձնելով
89-րդ Հայկական հրաձգային գիվիզիայի
հրամանատարությունը, Սաֆարյանն ան-
միջապես խորասուզվեց գիվիզիայի մարտա-
կան կյանքի մեջ, պլաններ մշակեց նրա
մարտունակությունն է՛լ ավելի բարձրաց-
նելու համար:

Սաֆարյանի գիվիզիան որոշ ժամանակ
զբաղվեց մարտական ուսմամբ՝ իր հզորու-
թյունը բարձրացնելու համար։ Նա գիշեր-
ցերեկ հանգիստ չուներ։ Անհրաժեշտ եղաւ-
կացություն անելով ձմեռվա մարտերի ըն-
թացքում ունեցած թերություններից,
Սաֆարյանը լարված աշխատում էր գիվի-
զիայի մարտունակությունը բարձրացնելու և
առաջիկա դաժան մարտերում հաղթանակն
ապահովելու համար։ Նա կատարելագոր-
ծում էր սպաների ու մարտիկների մարտա-
կան վարժությունը, խիստ ամրապնդելով
դորամասերում ռազմական երկաթյա կար-

գապահությունը, ստեղծելով կարդ ու կանոն և կազմակերպվածություն:

Նա զիվիզիայի անձնակազմին վարժեցնում էր զենքի ու տեխնիկայի բոլոր տեսակների գործածության ճիշտ եղանակներին և զենքի բոլոր տեսակների փոխգործողությանը:

Գնդապետ Սաֆարյանն այսուեղ ևս հասավ իր նպատակին: Մարտիկները և սպաները գիշեր ու ցերեկ խորանում էին ռազմական արվեստի մեջ, դառնում իրենց զենքի վարպետներ: Հայ ռազմիկները բոլորն էլ համակված էին մի ցանկությամբ՝ խորացնել գիտելիքները, է՛լ ավելի լավ տիրապետել կովելու արվեստին, լինել կազմ ու պատրաստ՝ հայ ժողովրդի ոխերիմ ու պիղծթշնամու դեմ մարտնչելու, նրան գլխովին ոչնչացնելու համար:

Հայ ժողովրդի նամակը ճակատային հայ մարտիկներին՝ բոցավառեց ռազմադաշտում գտնվող հայ ռազմիկների սրտերը: 89-րդ զիվիզիան երդում տվեց հայ ժողովրդին ետքնար եղբայրական մյուս ժողովուրդների

քաջասիրտ գավակներից, նրանց հետ ուսու-
ուսի տված սիրասուն հայրենիքը մաքրել
հիտլերյան աղտեղությունից:

Սաֆարյանը լինում էր բոլոր վաշտերում,
գումարտակներում, անձամբ օդնում սպա-
ներին մաշտերի նոր ձևերը յուրացնելու
գործում:

Եվ նրա անգուլ աշխատանքը մեծ ար-
դյունքներ տվեց:

1943 թվի օգոստոսի սկզբներին Հյու-
ստային կովկասի ռազմաճակատի հրամա-
նատար, գեներալ-գնդապետ ընկ. Ի. Պետրովը
անձամբ ստուգելով գիվիզիայի մարտական
ուսուցման վիճակը, բարձր գնահատական
է տալիս Սաֆարյանի գիվիզիային:

Սաֆարյանի գիվիզիան բարձր գնահա-
տական է ստանում նաև Կարմիր Բանակի
շտաբի հանձնաժողովի կողմից: Այդ հանձ-
նաժողովը գիվիզիայի աշխատանքները վեց
օր մանրագնին կերպով ստուգելուց հետո,
արձանագրում է, որ գիվիզիան ամուր
կանգնած է ոտքի վրա, մարտունակ է և
կարող է լավագույն գիվիզիա դառնալ:

Եվ իրոք, Սաֆարյանի դիվիզիան կազմ
ու պատրաստ էր մարտերի համար։

Հյուսիսային նովկասի ռազմաճակատի
Թաղմական Խորհուրդը հարգեց նրա ցան-
կությունը և հնաշակորություն տվեց
հայ ժողովը՝ գիտած ելքունը կատա-
րելու։

Հայ ժողովը քաջասիրտ ռազմիկները
գնդապետ Նվեր Սաֆարյանի ղեկավարու-
թյամբ սեպտեմբերի Յունիս սկսած մասնակ-
ցեցին Նովորոսիյսկ քաղաքը և Թամանի
թերակղզին Փաշիստական օկուպանտներից
մաքրելու կատաղի մարտերին։ Այդ մարտե-
րում Սաֆարյանի զորամասերն անթիվ քա-
ջագործություններ կատարեցին։

Սեպտեմբերի Յունիս դիվիզիան պաշտպա-
նական մարտեր էր մղում Նովորոսիյսկից
հյուսիս ընկած բարձունքների վրա՝ 18 կիլո-
մետր ճակատով և միաժամանակ նախա-
պատրաստվում էր անցնել հարձակման։

Հիտլերյան հորդաները պաշտպանության
ամուր դիմ էին ստեղծել Նովորոսիյսկի շրջա-
նում՝ «Սախարնայա գոլովա» և «Դոլգայա»

բարձունքնելում։ Ճակատի ամբողջ երկարությամբ ու լայնությամբ լեռները, գժվարանցանելի հակայական անտառները պատել էին դօտերի, դզօտների, ականապատ դաշտերի, հականետևակային արգելակների և խիտ փշալարերի ցանցով, որոնք միացված էին խոր ու երկար խրամատներով։ Նենք թշնամին ստեղծելով այդ բոլորը, նպատակ ուներ, Թամանի թերակղղին պաշտպաննելուց բացի, պլացդարմ ունենալ հետագայում դեպի Սնողրկովիաս նոր ոտնձգություններ կատարելու համար։

Հենց այս մարտերում իրենց անուններն անթառամ փառքով պսակեցին գնդապետ Սաֆարյանը, նրա սպաներն ու մարտիկները։ Այդ վճռական ու ահեղ մոմենտին գնդապետ Սաֆարյանը ցուցաբերեց մարտ ղեկավարելու բարձր ունակություն։ Նա տալիս էր հավասարակշռված ու խիզախ հրամաններ։ Կովի կատաղի ըռպեներին նա մոտենում էր մարտիկներին ու սպաներին, խրախուսում նրանց։ Նա անցնում էր խիտ փշալարերի միջով ու ականապատ դաշտե-

ըով, անցնում էր խրամատից խրամատ,
մարտիկներին ու առաներին ներշնչում
թշնամուն հաղթելու վճռական բոլքելիյան
կամք, սիրու տալիս ու քաջալերում փառա-
պտնծ հրետանավորներին, ականաձիգներին,
գնդացրորդներին, անայտերներին ու սակ-
րավորներին:

Հայկական 89-րդ հրաձգային գիվիզիայի
գիմաց կանգնած էին գերմանական 70-րդ
գիվիզիան և ուռմինական լեռնահրաձգային
գիվիզան:

Սաֆարյանը հրետանային հումկու կրտ-
կի տակ անմիջապես առաջ շարժեց հերոսա-
կան սակրավորներին: Այդ գյուցագունները
քաջալերվելով իրենց սիրելի կօմդիվի խի-
զախության վարակիչ օրինակով, արճա-
մարհելով սարսափն ու մահը, հաշվի չառ-
նելով գագաղած թշնամու կատաղի կրտկը,
նրա կրակի տակ առաջ շարժվեցին ու բաց
արին անցուղիներ: Հանկարծակի բերելով
թշնամուն, հետևակայինները գրոհիչ խրմ-
բերով սկսեցին հարձակվել ու ճեղքել գեր-
մանա-ֆաշիստական պաշտպանության հետ-

պույտ գիծը» և գրավեցին «Դոլգայա»
լեռն, ինչպես և «Սախարնայա դոլովա»
բարձունքը:

Սաֆարյանի զորամասերի հարվածների
տակ թշնամու դիվիզիաների մնացորդները
փախչում էին գեղի պաշտպանության նոր
ընագիծ, որը «Զիգֆրիդի գիծ» էին անվա-
նում:

Սաֆարյանը կրնկակոխ հետապնդելով թշ-
նամուն, գրավեց Նեքերջայի լեռնանցքը
և փակեց Նովորոսիյսկից փախչող գեր-
մանա-ֆաշիստական զորքերի ճանապարհը:

Դիվիզիան շարունակելով հարձակումը,
նոր խորտակիչ հարվածներ է հասցնում
հիտլերականներին և գրավում Վերինյայա
Բականսկայա շրջանային կենտրոնի արև-
մտյան բարձունքները՝ այսպես կոչված
«Զիգֆրիդի գիծը», որն ուներ տակտիկական
խոշոր նշանակություն: Այդ հաղթանակը
հնարավորություն է տալիս Սաֆարյանի
դիվիզիայի հարեան զորամասերին մար-
տական գործողությունները զարգացնել և

դրավել Վերինյայա Բականսկայա շրջանացին կենտրոնը:

Այդ մարտերը հաջող ավարտելու համար գնդապետ Սաֆարյանը պատշաճ տեղեկություն էր հավաքել թշնամու պաշտպանության սիստեմի, զորամասերի և կրակակետերի դասավորման մասին։ Նա ճկունությամբ վերախմբավորեց իր ուժերը, հաջողությամբ սկսեց հարվածել թերեց, որպեսզի դուրս գա թշնամու թիկունքը, դրանով իսկ համարձակ հարձակում սկսի դեպի հակառակորդի պաշտպանության խորքը։ Այս իրագործելու համար, Սաֆարյանը գումարտակի հրամանատար, մայոր Վաչագան Պողոսյանին խընդիր տվեց՝ երկու լեռնաշղթայի վրայով շրջապատել ու ոչնչացնել հակառակորդի պաշտպանության կարևոր հանգույցը։ Պողոսյանի գումարտակը հաջողությամբ շրջապատեց թշնամու կարևոր այդ հանգույցը և մարտի բունվեց հիտլերականների հետ։ Անօրինակ մարտից հետո թշնամին մեծ կորուստներ կրելով՝ դիմեց փախուստի։ Կապիտան Գրիգոր Խաչատրյանի գումար-

տակը նույնակեմ այդ պահին փայլուն
կերպով կատարեց իր մարտական առաջա-
դրանքը և թշնամուց դրավեց պաշտպանու-
թյան մի խիստ կարևոր ճանգույց:

Մայոր Մամիկոն Խաչանյանին վիճակ-
վեց իրագործել Սաֆարյանի մանկրային
տակարկայի ավարտական մարտը, Գինալլի:
Նա երկու լեռնաշղթայի մեջտեղից ճեղքեց
Փաշիստական պաշտպանության դիծը, որ
թշնամին համարում էր անմատչելի, և նրա
համար ստեղծեց ծանր վիճակ: Հիտերական-
ները խուճապի մատնվելով դիմեցին փա-
խուստի:

Հերինյայա Բականսկայայի համար մղվող
սրընթաց մարտերը հնարավորություն տվին
փրկելու 5000 սովորական քաղաքացիների,
որոնց գերմանացիները պատրաստվում էին
քշելու պարկության: Նրանց մեջ կային մոտ
500 հայեր:

Հետագայում զարգացնելով հարձակումը և
կրնկակոխ հետապնդելով թշնամուն, Սաֆա-
րյանի դիմիլիքիան ազատագրեց Դաստական-

պահությունը առաջարկությունը հաջող է առաջարկ:

սկայա, Սուվորով~Զերկեսկ, Պըիմորսկայա
և այլ ավաններ ու գյուղեր:
Կուրբատսկայի ուղղությամբ իր չոր-
րորդ բնագիծը թշնամին ամբացը ել էր ական-
ներով, միշալարերով, հակատանկային ար-
գելափակոցներով, դօտերով, դզօտերով։ Այս
խիստ ամբացված բնագիծը ճեղքելու համար
Ստվարյանը որոշում է թշնամուն խփել թե
թիկունքից և թե ճակատից։ Այս նողատակի
համար որոշում է ավտոմատավորների վաշ-
տերը թշնամու թևից անցկացնել նրա թի-
կունքը, և հաջողվում է։ Ապա սկսվում են
կատաղի մարտերը։ Քաջուիրտ հրետանա-
վորները, ականանետիչները, հակատանկա-
յին հրետանավորները իրենց շեշտակի կրա-
կով հօգու ցնդեցրին, քար ու քանդ արին
թշնամու բազմաթիվ դօտեր, դզօտեր ու
բլինդաժներ և ընդմիշտ հողի տակ թաղեցին
հարյուրավոր հիտլերականների գոռող գլուխ-
ները։
Դիվիզիան երկու օր անընդհատ գրոհելով՝
հաջողությամբ ցավարտեց Կուրբատսկայի

ուղղությամբ թշնամու կառուցած պաշտամության չորրորդ բնագծի ձեղքումը:

Թշնամու կատաղի դիմադրությունը չթուլացրեց Սաֆարյանի զորամասերի հարձակողական թափիը և վրեժխնդրության կըրքուտ կամքը: Գաստակայայի ուղղությամբ նրանք մեկ օրում ազատագրեցին Օլխովկա, Վազնեսենսկայա, Լիման, «Հնգամյակ», Վերխնի Կուրդան, Կրամսայա Գաստակայկա, Վերխնյայա Գաստակայկա խոշոր գյուղերը և տամայակ հաղար սովետական քաղաքացիների:

Միջահասակ, նիհար, մկանուտ, թուխ, հանգիստ ու զուսպ Սաֆարյանը անողոք է դեպի թշնամին: Մարտի ժամանակ նա զարմանալի համարձակ է: Գիտե արագ կողմնորոշվել, ուրիշի թույլ տված սխալն իր զործողությամբ շտկել Այնտեղ, ուր բացահայտ վտանգ է սպառնում, երևան է գալիս այդ վերին աստիճանի համեստ ու նիհար մարդը: Նա շարունակ լինում է մարտի ամենավտանգավոր վայրերում, խրամատից խրամատ է անցնում, ոգեշնչում

հարազատ մարտիկներին։ Մարտիկներն ու
սպաները պաշտելու չափ նըան սիրում են։

Որպեսզի 89-րդ Հայկական հրաձգային
դիվիզիան դուրս բերի Կարսիր Բանակի
առաջավոր դիվիզիաների շարքերը և կատա-
րի հայ ժողովրդի նակազը, Սաֆարյանը
անում է մի նոր խիզախ քայլ։ Գիշերային
մթության մեջ, նա դիվիզիան ամբողջ կազ-
մով, հիանալի կազմակերպվածությամբ ու
բարձր կարգապահությամբ տանում է ան-
անցանելի կիրճերի, ճահճների, ավազուտ-
ների, ականապատված դաշտերի միջով,
անցնում 32 կիլոմետր և դուրս գալիս թշշ-
նամու թիկունքը։

Գիշերային այդ դժվար ու անօրինակ
երթի մասին գնդապետ Նվեր Սաֆարյանը
գրում է. «Օգտվելով գիշերային մթու-
թյունից, դիվիզիան ամբողջ կազմով հիա-
նալի կազմակերպվածությամբ ու բարձր
կարգապահությամբ կատարեց գիշերային
երթ, անցնելով 32 կիլոմետր ճահճնե-
րով, ավազուտներով, ականապատված դաշ-
տերով ու դուրս եկավ թշնամու թի-

կունքը՝ Գոլյակ ցամացալեզուն։ Երթի
ընթացքում առաջից գնում էր փոխպահն-
դատեա Երվանդ Կարապետյանի գորա-
մասը։ Ամբողջ գիվիզիան սկսեց մարտ մզել
Մակոտի և Պոլիվանտինա բարձունքների
համար։ Երկու օր, դիշեր ու ցերեկ, հայ
սազմիկներն անընդհատ գրոհում էին թշշ-
նամուղիբերի վրա, որոնք ամբացված էին
դօտերով, դզօտերով, փշալարերով ու ական-
ներով։ Այդ ժամանակամիջոցում մարտիկ-
ները ճահիճների, ջրի, ցեխի միջով անց-
նելով՝ հաղթահարեցին բոլոր տեսակի դըժ-
վարությունները։

Երկու օրից հետո մեր դորամասը ճեղ-
քեց թշնամուղեւեղ ամբացված ճակատը և
դրավեց բարձունքները։ Այդ բարձունք-
ների գրավումը հանդիսացավ թաման քա-
ղաքի ազատագրման բանալին»։

Թշնամու թիկունքում, թամանի թերա-
կղղու և թաման քաղաքի ազատագրման
համար մզվող փոթոքկալի մարտերում հող-
մացրիվ անելով գերմանական պաշտպա-
նության ամբությունները, Ասֆարյանն իր

Դիվիզիայով ցույց տվեց անվեհերություն։
Ավարտվեցին Թամանի համար մղվող մար-
տերը։

Թշնամու դեմ հարձակման յուրաքան-
չյուր էտապում դիվիզիայի գործողություն-
ներին ուշադիր հետևում էին Հյուսիսային
Կովկասի ռազմաճակատի հրամանատար,
բանակի գեներալ ընկ. Պետրովը և բանա-
կի հրամանատար, գեներալ-գնդապետ Լեսե-
լիձեն, բարձր գնահատական տալով դիվի-
զիայի հաջող գործողություններին։

Օրինակ, երբ սեպտեմբերի երկրորդ կե-
սին դիվիզիան դեռ նոր էր գրավել Ներեր-
ջայի լեռնանցքը և հարձակվում էր Վեր-
խնե-Բականսկայա ստանիցայի վրա, ռազ-
մաճակատի հրամանատար, բանակի գենե-
րալ ընկ. Պետրովը այցելեց դիվիզիան և
անձամբ նրա առաջ խնդիր դրեց՝ արագաց-
նել Վերխնե-Բականսկայայի գրավումը։

Այդ խնդիրը պատվով կատարվեց։ Երբ
զրավվեց Նատուխաևկայան, ընկեր Պետ-
րովից ստացվեց դիվիզիայի հրամանատար,
գնդապետ Սաֆարյանին, քաղաքական գծով

տեղակալ, փոխ-դնդապետ Հակոբյանին, Հայ-
կական դիվիզիայի մարտիկներին, սեր-
ժանտներին և սպաներին հասցեազրված մի
դիմում, որի մեջ ասված էր.

«Մարտական հայ ընկերներ.

... Հյուսիսյին եռվկասի ուազմաձակատի
զորքերի հաղթական մարտակարգում 89-րդ
Հայկական հրածգային դիվիզիան գրավել է
իր տեղը և ամբողջ զորքի հետ միասին արիա-
բար մարտնչում է տակելի թշնամու դեմ:

Թշնամուն խոցելու և ոչնչացնելու, ձեզ,
ձեր հարազատ Հայկական դիվիզիան և դրա-
նով իսկ ամբողջ հայ ժողովրդին փառքով ու
մարտական արիության նշանով պատճելու
հոյակառ առիթ է ներկայանում, կովկասի
համար մղվող ճակատամարտի վերջին էտա-
պը մոտենում է հաղթական վախճանին: Տա-
րակույս չկա, որ Գերազույն Գլխավոր Հրա-
մանատար, Մարշալ ընկեր Ստալինը, մար-
տական արիություն ցուցաբերող և փառք
նվաճող դիվիզիաներին ու գնդերին կնշի
պարզեներով ու թամանյան կոչում շնորհե-
լով»:

Դիվիղիան բացառիկ դժվարին ճանապարհ անցավ մինչև հասավ Գոլյակ։ Մարտիկներն անցան ծովալճակով, ականագաշտով ու փշալարերի միջով ու կոտրեցին հակառակորդի դիմադրությունը։

Եվ երբ նըանք անցան հակառակորդի վերջին բնագիծը և ձախկողմյան հարեանի ու տանկերի հետ միասին կոմբինացված հարվածով գլավեցին թամանքաղաքը և դիվիզայի զորամասերը հասան թամանի ծոցի ավին, այդ ժամանակ հետևյալ հեռագիրն ստացան ընկեր Պետրովից։

«89-ըդ հրաձգային դիվիզայի հրամանատար, զնտապետ ընկ. Սաֆարյանին։

Քաղմասի գծով տեղակալ փոխ-զնդապետ Հակոբյանին։

Հեռագիտակով ուշադիր հետեւմ եմ ձեզ հանձնված զորքերի գործողություններին։ Լիովին գոհ եմ շարքային մարտիկների և սպաների արիությամբ, քաջությամբ։

Գերազանց և խիզախ գործողությունների համար անձնակազմին հաղորդեք ուղմաճա-

կատի Ռազմական Խորհրդի շնորհակալությունը:

Զեր գորամասերը պարգևատրման իրավունք նվաճեցին: Ռազմական Խորհուրդը կոչ է անում ձեզ՝ Է՛լ ավելի լարել ձեր ջանքերը, և թշնամին ծովը կթափվի»:

Թամանի թերակղզին գերմանա-ֆաշիստական զավթիչներից ազատագրելու ահեղունքունք ներոսական մարտերում ցուցաբերած խիշտագիտության, քաջության, անձնազոհության ու անվեհերության համար 89-րդ Հայկական դիվիզիայից 2600 հոգի պարգևատրվեցին ՍՍՌՄ շքանշաններով ու մեդալներով:

Մարտական գործողությունները հմտութեն ու արիարար զեկավարելու և այդ գործողությունների հետևանքով գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ թամանի թերակղզում մղվող մարտերում ձեռք բերած հաջողությունների համար, ՍՍՌՄ Գերազույն Սովետի Նախագահությունը իր 1943թ. հոկտեմբերի 25-ի Հրամանագրով 89-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատար, գընդապետ Նվեր Գևորգի Սաֆարյանին պար-

գևատրեց Սուվորովի 2-րդ աստիճանի
շքանշանով:

Գերազույն Գլխավոր Հրամանատար, Սու-
վետական Միության Մարշալընկեր Ստալինի
հրամանով 89-րդ Հայկական հրաձդային դի-
վիզիային շնորհված է «Թամանյան» անունը:

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի
գորքերի հրամանատար, գեներալ-գնդապետ
Պետրովը ՀԿ(Բ)Պ կենտկոմի քարտուղար ընկ.
Դր. Հարությունյանին ուղարկած ողջույնի
հեռագրի մեջ գրում է. «... Կովկասի համար
անցյալ տարի աշնանը Թերեքի, Տուապսիի
մոտ, Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի լեռ-
նանցքներում սկսված ճակատամարտի վեր-
ջին էտապն ավարտվեց, Թշնամու ջախջախ-
ված զորամասերը պարտություն կրելով,
խայտառակ կերպով փախան Դրիմ: Մար-
տերում աչքի ընկավ գնդապետ Սաֆարյանի
89-րդ Հայկական դիվիզիան»:

Կարմիր Բանակի 42—43 թվերի ձմեռային,
հարձակման ընթացքում Հյուսիսային Կով-
կասը գերմանա-ֆաշիստական ազտեղու-
թյունից մաքրելու համար մղված մարտե-

ըում 89-րդ Հայկական հրաձգային դիվի-
զիան փայլուն գործեր կատարեց: Մարտերով
նա կտրեց-անցավ 600 կիլոմետր ճանապարհ,
թերեքի հարավային ափից, Կովկասյան կու-
րորտային քաղաքների վրայով, Ստավրո-
պոլի տափաստաններով ու կիրճերով գնաց
հասավ մինչև Եյսկ, ապա Նովորոսիյսկ ու
Թաման քաղաքները:

ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Գր.
Հարությունյանը զեներալ-գնդապետ Ի.Պետ-
րովին ուղարկած աղատասխան ողջույնի
հեռագրով շնորհավորում է նրա ղեկավարած
դորքի ձեռք բերած հաջողությունները և
միենույն ժամանակ խնդրում է՝ Հայաստանի
Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի
Կենտրոնական Կոմիտեի շնորհակալությունը
և շնորհավորանքը հաղորդել 89-րդ Թամա-
նյան հրաձգային դիվիզիայի հրամանատար
Սաֆարյանին, բոլոր սպաներին, սերժան-
տական կազմին և բոլոր մարտիկներին,
որոնք պատվով են կատարում իրենց ժողո-
վըրգի պատգամը գերմանա-ֆաշիստական
զավթիչների զեմ մղվող պայքարում:

Եվ իրոք, հայ ժողովրդի զյուցազուն զավակները, իրենց փառապանձ հրամանաւտար, Հայրենական պատերազմի ճակատաներում կոփված Սաֆարյանի ղեկավարությամբ, իրենց անձնուրաց քաջությամբ բազմազատկում են սովետական հղոր զենքի փառքը և բարձր են պահում մեր ժողովրդի պատիվը:

1943 թվի հոկտեմբերի 13-ին «Պրավդա»-յում տպագրված «89-րդ թամանյան» վերնագիրը կրող հոգվածում, դիվիզիայի հրամանատարի քողաքական գծով տեղակալ փոխ-գնդապետ Հակոբյանը գրում է.

«Անմոռանալի օրեր է ապրում գնդապետ Սաֆարյանի՝ այժմ թամանյան վերանվանված 89-րդ հրաձգային դիվիզիայի ամբողջ անձնակազմը։ Դիվիզիան փայլուն հաղթանակ տարավ Նովորոսիյսկի և թամանի թերակղզու ազատագրման համար մղվող ընդհանուր պայքարում։

Գերմանացիները մեկ տարվա ընթացքում ամրացնում էին լեռնային բնագծերի վրա ձգված ոլաշտապանությունը։ Գերմանացիների

այդ հենակետերը գրոհով գրավեցին 89-րդ
հրաձգային դիվիզիայի մարտիկները՝ հայ
ժողովրդի լավագույն զավակները։ Դիվիզիան
սրբնթաց գրոհով գրավեց Ներերջայի լեռ-
նանցքը։ Զորամասերի հարձակումն այնքան
սրբնթաց էր, որ հնարավորություն տվեց
ազատելու ավելի քան 5000 խաղաղ բնա-
կիչների, որոնց գերմանացիները պատրաստ-
վում էին քշելու ստրկության։

Մասնակցելով հակառակորդի պաշտպա-
նական գոտու ճեղքմանը, դիվիզիան ազա-
տագրեց Նատուխաևսկայա, Գաստակայի
խոշոր բնակավայրերը, Առվորով-Չեր-
կեսկի առւլը և այլն։ Դիվիզիան ավելի քան
100 կիլոմետր տարածության վրա հաղթա-
հարեց 7 ամրացված բնագիծ։ Հայ մար-
տիկներն անթառամ փառքով ոպակեցին
իրենց՝ Թամանի թերտիկղու ազատագրման
համար մզված պայքարում։ Անմահ կմնա
մարտիկ Ավետիսյանի կատարած սխրա-
գործությունը, Ավետիսյանն առաջինը ներ-
խուժեց «Դոլգայա» լեռան վրա թշնամու
կառուցած ամրությունները, նոնակներ նե-

ոեց հակառակորդի դզօտերի մեջ և, Սովետական Միության Հերոս, պանծալի Ալեքսանդր Մատրոսովի օրինակով, իր մարմնով ծածկեց հակառակորդի դզօտի հրանցքը: Մարտիկ Ավետիսյանի հերոսական սխրագործությունն ապահովեց թշնամու դզօտերի և խրամատների գրավումը այդ բարձունքի վրա:

Հայ ժողովրդի լավագույն զավակները պատվով արդարացրին իրենց հայրենիքի հույսերը և իրենց գիվիզիան դուրս բերեցին Գերագույն Գլխավոր Հրամանատար, Սովետական Միության Մարշալ ընկեր Ստալինի կողմից նշված Կարմիր Բանակի լավագույն զորամասերի շարքը»:

* * *

Թամանի ազատագրումից հետո երգեր ու տասնյակ բանաստեղծություններ նվիրվեցին հաղթող հերոսներին՝ գեներալ Մաֆարյանին և նրա քաջարի ուազմիկներին: Ներկայումս ամբողջ ռազմաճակատում թընդում է «Թամանցիների քայլերգը»: Թէ մարտի և թէ հանգստի ժամին այդ քայլերգով են

ոգեսրվում թամանցիները, այդ քայլերդով
են նրանք մարտի գնում ու կըակ թափում
գերմանացիների գլխին:

Ահա այդ քայլերդը, որ մեջ հնք բերում
«Կարմիր Զինվոր» ճակատային թերթից.

Շաշիր դու, արկ, երգիր ական,
Պայթիր վրեժ մեր Հայկական,
Փայլեք սրեր, քանց շանթ ու բոց,
Անմար պահենք փառքը հայոց:

Առաջ, հանուն նախնիների,
Մենք թոռներն հնք քաջ Վարդանի:

Անցել ենք մենք լեռներով սեզ,
Վառել ջահերն աղատաբեր,
Անուշ հովեր, քնքուշ զովեր,
Դուք էլ երգեք համբավը մեր:

Առաջ, հանուն Հայաստանի,
Մարտերի մեջ մենք ջահակիր:

Շաշիր դու, արկ, երգիր ական,
Պայթիր, վրեժ մեր Հայկական,
Առաջ զնանք մարտերով հաղթ,
Կովենք անվախ, լինենք անպարտ:

Առաջ, հանուն հաղթանակի,
Մեր ձեռքումն է Թուր-Կեծակին:

Հայրենական պատերազմի ռազմակաշ-
տում աճում ու զարգանում է հայ ժողովրդի
զավակ Սաֆարյանը: Լինելով խստապահանջ
հրամանատար, նա ջերմ սիրում է իր մար-
տական ընկերներին՝ կարմիրբանակային-
ներին և հրամանատարներին: Այն բոլոր զու-
րամասերում, որտեղ նա հրամանատար է
եղել, մարտիկներն ու հրամանատարները
միշտ հիացմունքով են խոսում Սաֆարյանի
մասին:

Իրոք, նա դիվիզիայի հայրն է:

* * *

Գերմանա-ֆաշիստական զավթիչների
դեմ մղվող Հայրենական պատերազմի ահեղ
մարտերում Ն. Գ. Սաֆարյանը ցուցաբերեց
տաղանդավոր հրամանատարի ուժը, մար-
տերում հմտորեն զորք ղեկավարելու ունա-
կության բարձր հատկությունը, որի համար
ՍՍՌ Միության ժողկոմսովետը իր 1943
թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ Նվեր

Գեղրգի Սաֆարյանին շնորհեց գեներալ-
մայորի զինվորական բարձր կոչում:

Գեներալ-մայոր Սաֆարյանն իր դիվի-
զիան նոր հերոսական մարտերի էր պատ-
րաստում Ղրիմի ազատագրման համար:

Գերմանական հրամանատարությունը
Ղրիմը համարում էր անառիկ և հոխորառում
էր այն մասին, որ սովետական զորքերն
այլևս չեն կարող առաջ շարժվել հարա-
վային ճակատում: Եվ երբ Սաֆարյանի զո-
րամասերը կարմիր Բանակի մյուս զորա-
մասերի հետ միասին մի հերոսական ու-
տյունով իջան կերչի թերակղզում ու հան-
կարծակի բերելով թշնամուն, ամուր գիր-
քեր բռնեցին այնտեղ, ուղամական տարե-
գրությունն արձանագրեց սովետական զոր-
քի մի փայլուն հաղթանակ ևս:

1944 թվի ապրիլին սկսվեց կարմիր Բա-
նակի վերջնական հարծակումը՝ Ղրիմը գեր-
մանառումինական բարբարոսներից մաք-
րելու համար: Այդ հարծակումն ավարտվեց
փայլուն կերպով և արժանացավ մեծ Ստալինի
բարձր գնահատականին: Ղրիմի ազատա-

գրման մարտերում քաջարի գործերով
ներկայացրեց իրեն Սաֆարյանի դիվիզիան։
Հայ ժողովրդի զավակներն այդ մարտերում
դյուցազնական գործեր կատարեցին։ Այդ
առթիվ Ծովափնյա բանակի զորքերի
հրամանատարությունը մայիսի մեկին հայտ-
նում է Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի քար-
տուղար ընկ. Դր. Հարությունյանին. «Հաղ-
թական Կարմիր Բանակի շարքերում արիա-
բար մարտնչում են Հայաստանի զավակները,
Ղրիմի ազատագրման համար մղվող մար-
տերին մասնակցում է Թամանյան հայկական
հրաձդային դիվիզիան։

Պանծալի գնդերը գրոհեցին Կերչ քա-
ղաքի ամբությունների վրա և ճեղքեցին
հակառակորդի խիստ ամրացված պաշտպա-
նությունը Կերչի թերակղղում։

Կառավարությունը բարձր գնահատեց
89.րդ Թամանյան դիվիզիայի մարտական
հաջողությունները և պարգևատրեց նրան
«Կարմիր Աստղ» շքանշանով...»։

Ղրիմի հաղթական կամպանիայի ըն-
թացքում Թամանյան, «Կարմիր Աստղի» շը-

քանշանիկիր 89-րդ դիվիզիան գեներալ-մայոր Սաֆարյանի ղեկավարությամբ մարտական նորանոր սխրագործություններ կատարեց։ Սևաստոպոլի՝ ոռւսական փառքի քաղաքի ազատագրման համար մզված մարտերում դիվիզիան բազմապատկեց իր սազմական փառքը։

Նկարագրելով Սևաստոպոլի համար տեղի ունեցած մարտերը, գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը «Սովետական Հայաստան»-ի 1944 թվի հունիսի 16-ի համարում տպագրված իր հոդվածում գրում է.

«Բաջարի Կարմիր Բանակի մյուս միավորումների հետ միասին 89-րդ Թամանյան, «Կարմիր Աստղի» շքանշանով պարզեատրված դիվիզիան սրբությամբ կատարեց իր պարտքը Ղրիմի ազատագրման համար մզված պայքարում։

Ղրիմի թերակղզու հյուսիսից ու արեվելքից խուճապահար կերպով նահանջող գերմանական միավորումներն իրենց պաշտպանության դիրքերն ընդունեցին Սևաստոպոլի մոտ, որտեղ երկու տարի անընդհատ հիտ-

Եմբականներն ամրություններ էին կառուցել:

Մեր զիվիդիան մարտական խնդիր ստանալով Սևաստոպոլի վրա գրոհելու, հարձակման համար ելման քնաղիծ ընդունեց Կաղեկովիոյի և Բալակլավայի արևմտյան շրջանում: Այստեղից պետք էր գրոհել Գորնայա բարձունքի վրա, ոչնչացնել հակառակորդին, զրավել բարձունքն ու զարդացնելով հարձակումը, գրոհել Կամիշովատկա և Կաղաչայա ծովախորշի վրա:

Այդ շրջանում Գորնայա բարձունքը համարվում է զերակլշողը, իսկ պաշտպանության սիստեմում՝ Սևաստոպոլի բանալին: Դրա համար էլ զերմանացիները բոլոր ջանքերը գործադրել էին երկաթ-բետոնի գոտերով ու զղօտերով ծավալված խրամատներով, ամուր բլինդաժներով, պաշտպանության անառիկ ամրություն ստեղծել: Հենց զրա համար էլ զերմանական հրամանատարությունը հրամայել էր իր զորքերին ոչ մի քայլ ետ չգնալ և ամեն գնով պահպանել պաշտպանության այդ բնագիծը:

Զորամասերից երկուսին մարտական

ինսկիր տրվեց՝ կազմակերպել գրոհող խմբեր
և մարտակարգի աջ թերեց հարձակվել Գոր-
նայա բարձունքի վրա։ Հրետանային ահեղ
կրակից հետո բանակայինները, սերժանտ-
ներն ու սպաները բացառիկ խիզախությամբ
գրոհեցին բարձունքի վրա։ Զարդացնելով
հարձակումը, մեր ստորաբաժանումները գը-
րավեցին Գորնայա բարձունքի հյուսիսային
մասը։ Այդ մարտերում առանձնապես աչքի
ընկան Շահբաղյանի և Մարգարյանի գու-
մարտակները։ Բարձունքի հարավային մասի
վրա, որը ավելի էր ամրացված, մեր ստո-
րաբաժանումները գրոհեցին գիշերային մը-
թության պայմաններում։ Մայոր Հ. Սիմո-
նյանի գումարտակը մարտական գործողու-
թյունները սկսեց ուղիղ ժամը 3-ին։ Նրան
օգնության հասավ կաղիտան Բարայանի
գումարտակը։ Ժամը 6-ին Գորնայա բար-
ձունքն արդեն մերն էր։ Այդ երկու գումար-
տակների հաջողությունը զարգացնելու նը-
պատակով մարտի մեջ մտցվեցին գնդապետ
ե։ Կարապետյանի ստորաբաժանումները։
Նրանք կայծակնային հարված հասցնելով

Հակառակորդին, մինչև չորս կիրումեար
առաջ շարժվեցին թշնամու պաշտպանու-
թյան խորքը: Ամենուրեք թափված էին
գերմանական զինվորների ու սպաների այ-
լանգակված հարյուրավոր դիակներ: Իսկ
մեր հերոս ավտոմատավորների ուղեկցու-
թյամբ գեպի թիկունք էին փոխադրվում
գերի վերցված գերմանական զինվորներն
ու սպաները:

Գորնայա բարձունքը գրավելը սազմական
արվեստին տիրապետելու լավագույն օրինակ
էր, որը ցույց տվեց, թե ինչպես քաջարի
Կարմիր Բանակի մյուս զորամասերի հետ
միասին հայ սազմիկներն ընդունակ են քար-
ուքանդ անելու և հաղթահարելու գերմա-
նացիների ամենանառիկ ամրությունները:
Գորնայա բարձունքի համար մղված մարտե-
րը հաջողությամբ ավարտելու համար դի-
վիզիան բարձր հրամանատարության կող-
մից արժանացավ խրախուսանքի:

Դրանից հետո հիտերյան ճիվաղները
փորձեցին մեր զորամասերի հարձակումը
կասեցնել N բարձունքի շրջանում, որը

ուներ պաշտանության բոլոր միջոցները։ Մահկայն այս հատվածում էլ վճռական հարված հասցնելով հակառակորդին, մեր ստորաբաժանումները նրան սեղմեցին կամիշովատկա և կազաչայա ծովախորշերում։ Այդտեղ վերջնական ջարդ կրելուց հետո, գերմանական զինվորների ու սպաների մնացած մասը գերի հանձնվեց։ Ամենուրեք դիվիզիայի շտաբին ղեկուցումներ էին տըրպում վերցված գերիների թվի մասին։

Այսպիսով ազատագրվեց հերոսական Սիվաստոպոլը։ Նրա վրա ծածանվում է սուվետական կարմիր դրոշը։ Այս ճակատամարտում 89-րդ հրաձգային թամանյան շքանշանակիր դիվիզիան աչքի ընկալիր հերոսական սխարագործություններով։ Դիվիզիան ոչնչացրեց գերմանական 1905 զինվոր ու սպա, զանազան տրամաչափի 95 հրանոթ, 309 ականանետ, 100 գնդացիր, 410 ավտոմեքենա։ Դերի վերցվեց գերմանական 2989 զինվոր ու սպա։ Դիվիզիան դրավեց հարուստ ուղմական ավար, այդ թվում զանազան տրամաչափի 114 հրանոթ,

29 ականանետ, 191 գնդացիք, 970 ավտոմեքենա, 160 մոտոցիկլիտ, ավելի քան 2.500 հրացան ու ավտոմատ, 10 զանազան պահեստ:

Սևաստոպոլի ազատագրման համար մղված ճակատամարտերում հրամանատարության մարտական խնդիրը զերազանց կատարելու համար դիվիզիան ՍՍՌՄ Գերազույն Առվետի Նախագահության կողմից ողարգեատըրվեց «Կարմիր Դրոշի» շքանշանով, իսկ նրա զորամասերից երկուսին Գերազույն Գլխավոր Հրամանատար մեծ Ստալինի հրամանով շնորհվեց «Սևաստոպոլյան» անունը»:

Այդ պատմական ճակատամարտերում ձեռք բերված հաջողությունները տեղի ունեցան շնորհիվ այն բանի, որ գյուղազնական դիվիզիայի մարտական գործողությունները հմտորեն էր ղեկավարում և յուրաքանչյուր մարտի ժամանակ զորավարելու վարպետություն էր ցուցաբերում գներաթմայոր Ստֆարյանը:

Հարազատ Ղրիմի ազատագրական մարտերում գեներալ-մայոր Ստֆարյանի զորա-

մասերը զարդարեցին իրենց գրոշները հաղթության պսակներով։ Դիվիզիայի անձնաւկազմից մոտ 3000 հոգի պարզեատրվեցին Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով։

Սովետական Միության Հերոսի կոչում շնորհվեց դիվիզիայի ռազմիկներ՝ ավագ սերժանտ Հունան Ավետիսյանին, որն իրեն անժահացրել էր Թամանի հոմար մղված մարտերում, ավագ սերժանտ Սուրեն Առաքելյանին և կարմիր բանակային սակրավոր Զահան Կարախանյանին։


Գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1944 թ. մայիսի 16-ի Հրամանագրով պարզեատրվել է Կուտուզովի 2-րդ տարինականի շքանշանով։

Ահա թե ինչ պանծալի ուղի է անցել Նվեր Սաֆարյանը։ Շարքային բանակայինի վիճակից նա բարձրացել է դիվիզիայի հրամանատարի աստիճանին, գեներալ-մայորի կոչմանը և իր հաղթ կրծքին վայելչությամբ կրում է Սուվորովի, Կուտուզովի,

«Կարմիր Դրաշի» և «Պատվոն Նշան» շքաւ-
նշանները:

Հայ ժողովուրդը կարող է պարծենալ, որ
Նվերի նման զավակ ունի:

Եվ գեներալ-մայոր Սաֆարյանն իր պահ-
ծալի թամանյան, «Կարմիր Դրաշի» և «Կարմիր
Աստղի» կրկնակի շքանշանակիր 89-րդ Հայ-
կական դիվիզիայով դալիք վերջնական մար-
տերում դեռ շատ հերոսական պսակներ կշահի:



Академия Наук Армянской ССР
Институт Истории

Боевые подвиги сынов Армении

АРМО МАЛХАСЯН

**ГЕНЕРАЛ-МАЙОР
НВЕР САФАРЯН**

(На армянском языке)


Изд. АН Арм. ССР, Ереван, 1944

ԳՅ 00906 Պատ. № 166. Հրատ. № 215. Տիրաժ. 4000

1,7 մտմուք մեկ մամուլում 29720 տպ. հիշ.

Ստորգրված է տպագրության 10/VII 1944 թ.

ՀԱՍՏ Գիտ. Ակադեմիայի 1-ին տպարան, Երևան.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045130

[152]
Գիւղ 3 մուկը.

A 1
8618